

Ձեկուցումից հետո հետաքրքիր հուշեր պատմեցին պարտիզաններ՝ Բ. Պետրոսյանը, Հ. Պետյանը, Լ. Տիտանյանը, Հ. Մարտիկյանը, Գ. Ստեփանյանը, Ա. Հոսեփյանը, Վերա Հովսեփյանը, Թ. Մանուկյանը, Ե. Տատուրյանը, Թ. Գալստյանը և ուրիշներ:

Ընթերցվեցին Սովետական Միության Հերոս Գավիթ Բաբրաձեի և «Հաղթանակ» պարտիզանական չոկատի հրամանատար Սերգեյ Հարությունյանի ողջույնի հեռագրերը՝ ուղղված Երեկոյի մասնակիցներին: Երեկոյի մասնակիցները ողջույնի հեռագրեր ուղարկեցին Սովետական Միության Կրկնակի Հերոս Ս. Ա. Կովալսկին, Սովետական Միության Հերոսներ, գեներալներ Ս. Ի. Նատուֆին, Պ. Հ. Վերջիգորային, Սովետական Միության Հերոս Գավիթ Բաբրաձեին, պարտիզանական չոկատի հրամանատարներ Հարություն Սաղումյանին և Սերգեյ Հարությունյանին:

Լ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի հնագիտական ուսումնասիրության պատմության մեջ 1957 թ. մտավ որպես խոշոր գյուտերի տարի: Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի ավագ պատշխաստող Ս. Սարգսյանը էջմիածնի, Աշտարակի, Թալինի շրջաններում հնագույն բնակավայրերի պեղումներով երևան է բերել զգալի քանակությամբ առաջնակարգ նյութեր, որոնք բնութագրում են նոր քարե դարի գոյությունը Հայաստանում:

Հայաստանը բրոնզի խիստ վարզացած մշակույթի երկիր է ևղել: Նրա տեղիտորիայի վրա սփռված են բրոնզի մշակույթի հուշարձաններ, որոնց մի զգալի մասը տեղադրված է Աևոնա լճի ավազանում: Բրոնզի մշակույթի ուսումնասիրության տեսակետից բացառիկ նշանակություն ունեն լճաշեն գյուղի մոտ Սևանա լճի ցամաքած տարածության վրա հայտաբերված հուշարձանները, մասնավորապես կուրգանների (գերեզմանաբլուր) և կրոմլեխների 1956—1957 թթ. պեղումներով ձևաք բերված նյութերը: Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պետական պատմական թանգարանի հնագիտական արշավախումբը, պատմական պատմության թանգարանի հնագիտական արշավախումբը՝ շարունակելով լճաշեն գյուղի մոտ 1956 թ. սկսած պեղումները, 1957 թ. պեղել է վեց կուրգան և մոտ 20 կրոմլեխ: Գրեթե երեք հազար տարի ջրի տակ անվթար պահպանված այդ հուշարձանները իրենց պարունակած առաջնակարգ նյութերով դիտական մեծ արժեք են ներկայացնում Հայաստանի այդ ժամանակաշրջանի պատմության պատմական լուսարանության համար: 1957 թ. լճաշենում պեղված կուրգաններն ու կրոմլեխները հետաքրքիր են թաղման ձևերի, դամբարանների կառուցողական, շինարարական առանձնահատկությունների, ինչպես նաև բնիկների հողևոր մշակույթի՝ պաշտամունքի առանձին կողմերի լուսարանության տեսակետից: Պեղումներով բացված բնահողային (գրունտային) թաղումները, կրոմլեխներն ու կուրգանները հասարակական շերտավորման վառ իլյուստրացիա են հանդիսանում: 1957 թ. լճաշենում բացվել են մ.թ.ա. XI դ. թվագրվող գրունտային՝ հողի կարվածքի մեջ արված թաղումներ, որոնք պարունակում են միայն կենդանիների՝ այծի, ոչխարի, եղան դանգեր և կարմիր ֆոնի վրա սև գծերով արված գունազարդ խեցեղեն, որ բնորոշ է վաղ բրոնզի ժամանակաշրջանի համար: Հնագիտական նյութերով աղքատ չեն հնագիտության մեջ կրոմլեխ անունով հայտնի թաղումները: Լճաշենի կրոմլեխները սովորաբար ձախ կողքի վրա պառկեց-

ված, ձեռքերն ու ոտքերը կուշ բերած վիճակում, քառօտանի պատգարակների վրա դրված մի մարդու կմախք, նաև կավամաններ, փայտե քրեղան, շերեփ և գդալ պարունակող թաղումներ են, որոնց մեջ բացակայում են մետաղե իրերը: Արտակարգ հարուստ են խիստ բազմազան, ամենատարբեր տիպի նյութեր պարունակող կուրգանները: Ինչպես հայտնի է, կուրգանները հողի մակերեսից 60—80 սմ բարձր քարակույտով ծածկված, 3 մետր լայնությամբ, 2—3 մետր խորությամբ, 3—8 մետր երկարությամբ ունեցող ստորգետնյա կառուցվածքներ են, որոնց պատերը բարձրացված են 2—3 տոննա քաշ ունեցող քարերով: Կուրգանները մեկ կամ երկու սայլ պարունակող թաղումներ են. եղներով լծված սայլն ուղղակի քշվում էր պատրաստված դամբարանի մեջ, ապա եզներին նետահարելուց հետո թաղում էին հանգուցայի հետ: Լճաշենի կուրգանները պարունակում են խուլ անիվներով կամ ճաղերով սայլեր, օրսի-դաքարից, կայծքարից նետասուլքներ, երկրաշափական գեղեցիկ զարդեր կրսու, կարմիր փայտի ընդելուզվածք ունեցող պատյաններով դաշույններ: 1957 թ. հայտնաբերված՝ կամարածե ծածկով, ցանցկեն հյուսվածքով կողքի ճաղեր ունեցող սայլի տախտակներն իրենց վրա կրում են երկրաշափական գեղեցիկ զարդեր: Սայլերը զարդարված են բրոնզե բազմատեսակ կոճակներով, լուծր զարդարված է բրոնզե ժապավեններով: Հայտնաբերված սայլերից մեկի քաշանը վերջավորված է առյուծների գեղեցիկ ֆիգուրաներով: Երրորդ կուրգանում սայլի միայն քաշանն է մնացել, անիվները բացակայում են: Հինգերորդ կուրգանում հայտնաբերվել է 36 ոչխարի, այծի, վարազի, ձիու գանգ, երևան են բերվել քարե գործիքներ, կավից կերտված բաղերի և կարապների փոքրիկ ֆիգուրաներ, որոնց վիզը և կտուցը կարմիր, իսկ իրանը սպիտակ է արված: Կուրգանների պեղումներով դաշույններից բացի հայտնաբերվել են սակերբ, կացիններ, բրիչ, բրոնզե կանթով և անկանթ կաթսաներ, թասեր, թռչնածե զարդեր, աշտանակի վրա՝ բրոնզից եղջերուի գեղեցիկ արծանիկ՝ եղջերուի ռեալիստական վերարտադրությամբ, ոսկե, ագաթե, սարդիոնե ուլունքներ և կոճակներ: 1957 թ. պեղումներով երևան է բերվել ունիկալ մարտակառքի մոդել, որի հարթակի վրա, ի տարբերություն 1956 թ. հայտնաբերված մարտակառքի, մոդելի երկու ռազմիկները պատկերված են պառկած վիճակում: Կուրգանների պեղումներով հայտնաբերված նյութերի մեջ խիստ ուշագրավ է խեցեղենը. հանդիպում են կավե արկղանման իրեր, սկուտեղներ, փոքր երկարավիզ դավառներ, կանթերով պղնձե կաթսա հիշեցնող կավամաններ: Խեցանոթներն իրենց սև ֆոնի վրա կրում են կարմիր և սպիտակ գույներով արված երկրաշափական և կենդանիներ պատկերող զարդեր, անոթներից մեկի վրա ասես երկու ուղտեր պատկերված լինեն. մեկընդմեջ կարմիր և սպիտակ գույներով արված այդ զարդը գեղեցիկ գոտեշար է կազմում: Խեցանոթներից ուշագրավ է օձերի ռելիեֆ քանդակների ունեցող անոթը: Լճաշենի պեղումներով հայտնաբերված, մ.թ.ա. XI—IX դդ. թվագրվող հնագիտական մեծ արժեք ունեցող առատ նյութը տարեցտարի հարստացնում է մեր գիտելիքները Հայաստանի բրոնզի ժամանակաշրջանի մասին:

Հայաստանի տերիտորիայում գտնվող հին Արևելքի ստրկատիրական խոշոր պետություններից մեկի՝ Ուրարտուի մշակույթի, տնտեսության և քաղաքական պատմության վերաբերյալ բացառիկ նշանակություն ունեցող նյութ են տալիս ուրարտական պետության հյուսիսային մասի տնտեսական և ռազմաստրատեգիական խոշոր կենտրոն հանդիսացող, Երևանի հյուսիս արևմտյան Տեղեկադիր 8—7

մասում, Հրազդանի ձախ ակին քարձրացող Թեյշեբախիի (մ. թ. ա. VII դ.) միջնաբերդի և քաղաքի պեղումները: Տասնվեցերորդ տարին է, որ այդ հուշարձանը պեղվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի և Պետական էրմիտաժի միացյալ հնագիտական արշավախմբի կողմից, որի աշխատանքները գլխավորում է պրոֆ. Բ. Բ. Պիտորով-սեին:

1957 թ. Թեյշեբախիի (Կարմիր բլուր) պեղումներով, միջնաբերդի հյուսիս-արևմտյան մասում, սկյութական դարպասից ոչ հեռու բացվել են մի շարք նոր սենյակներ. աշխատանքները շարունակվել են նաև միջնաբերդի կենտրոնական մասում. հայտնաբերվել են զգալի քանակությամբ երկաթե, բրոնզե իրեր ու առարկաներ, կավե տախտակներ: 1957 թ. պեղումներով բացվել է կարասային մի նոր դահլիճ 36 կարասներով, որոնք թեև փոքր են նախորդ տարիների հայտնաբերվածներից, սակայն հետաքրքիր են նրանով, որ կարասների մի մասի վրա պահպանվել են նրանց տարողության նշանները:

Հայտնաբերված իրերի մեջ խիստ ուշագրավ է ուրարտական քանդակադործության սքանչելի մի նմուշը՝ ռեալիստորեն և վարպետությամբ վերարտադրված ձիու ոչ մեծ շափի բրոնզե գլուխը. պրոֆ. Պիտորովսեին գտնում է, որ այն ծառայել է մարտական քաշանը վերջավորելու համար: Ուրարտական արվեստի նմուշներից պակաս ուշագրավ չէ նաև բրոնզե կաթսայի կանթը, որի մի ծայրին վերարտադրված է բաց արած եբախով առյուծի գլուխը: 1957 թ. բացված կարասային դահլիճում հայտնաբերվել է բրոնզե հարթ կահույքի երես, մեխերի հետքերով: Վերջինիս վրա դրվագված է առյուծի ամենայն մանրամասնությամբ, խիստ արտահայտիչ են վերջինիս ժանիքները, բաշը, գլուխը, մկանները և պոչը: Մեջտեղում մեծ մուլթ ունեցող մի այլ դահլիճում մի շարք սաղավարտների և առարկաների հետ հայտնաբերվել է մի մեծ բրոնզե կաթսա, ուռուցիկ իրանով և սրածայր նստուկով, որի շրջանակը և բռնակները պղնձից են. կաթսան լրիվ չի պահպանվել, այն ճգմվել է հրդեհի ժամանակ. փլվածքից: Բ. Պիտորովսեին գտնում է, որ այն նման է Մուսասիրի կաթսաներին և որ այդպիսի կաթսաներ եղել են ուրարտական տաճարներում: 1957 թ. պեղված սենյակներից մեկում հայտնաբերվել է բրոնզե վահան Արդիշտիի որդի Սարգուրի անունով. վահանը դրվագված է տրագիցիոն, քայլող առյուծների և ցուլերի գեղեցիկ զարդադրոտներով: Հետաքրքիր են նաև սկյութական սրբերի հատուկ խաչկապով երկաթե մեծ սրբերը: Թեյշեբախիի վերջին տարիների պեղումները տալիս են նաև տնտեսական, ինչպես նաև իրավական բնույթի փաստաթղթեր: Մինչև 1955 թ. միայն մի ամբողջական կավե տախտակ էր հայտնի. այժմ այդպիսիների թիվն արդեն հինգից անցնում է: 1957 թ. պեղումների ամենակարևոր արդյունքներից են սկյութական դարպասների մոտ պեղված սենյակներից հայտնաբերված երկու նոր, ամբողջական կավե տախտակներ սեպագիր արձանագրություններով, ինչպես նաև կավե տախտակների մի քանի բեկորները: Թեյշեբախիի պեղումները տարեցտարի հայտնաբերվող նոր, արժեքավոր գյուտներով լայն հնարավորություններ են ընձեռում Ուրարտուի, մասնավորապես նրա մշակույթի խորը և բազմակողմանի ուսումնասիրության համար:

1957 թ. պատմական դիտությունների թիկնածու Հ. Մարտիրոսյանի ղեկավարությամբ պեղումներն ավելի լայն ծավալով շարունակվեցին Թեյշեբախիի ստորոտում գտնվող ուրարտական քաղաքում: Թեյշեբախիի քաղաքի մա-

սին գիտական գրականության մեջ այն կարծիքն էր իշխում, որ այն մի ռազմական օբյեկտ էր, ուր ապրում էին զինվորներ, որոնք պաշտպանում էին Արարատյան դաշտավայրի ուրարտական սահմանները և հավաքում բնահարկը: Վերջին ժամանակների, մանավանդ այս տարվա պեղումները բերում են այն համոզման, որ Թեյշեբախինն եղել է ոչ շատ մեծ քաղաք, արևելյան քաղաքին հատուկ բոլոր բնորոշ առանձնահատկություններով, տարբեր էթնիկ խմբերով և սոցիալական շերտավորմամբ: Թեյշեբախինի 30—40 հա զբաղեցնող տարածության վրա ուսումնասիրվել են ուրարտական թաղամասերը, ուրարտական շերտից վերև դտնվող՝ վաղ հայկական, ուրարտական շենքերի տակ գտնվող հին շերտը և այն դամբարանադաշտը, որը կապվում է նախաուրարտական բնակավայրի հետ: Հին շերտի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նախաուրարտական ժամանակաշրջանում այստեղ գոյություն է ունեցել երկրագործական մշակույթով զբաղվող բնիկների մեծ բնակավայր: 1957 թ. երկու շենքերի միջև գտնվող բնակարանի բացումով հայտնի է դարձել Հայաստանի ուշ բրոնզի և վաղ երկաթի ժամանակի բնակարանի տիպը: Բացված բնակարանը հետաքրքիր է նրանով, որ նա նմանություն ունի Շենգավիթի Լնեռլիթյան բնակարանի հետ և իր կառուցվածքով ու հատակագծով կապվում է Հայաստանի միջնադարյան բնակարանների հետ: Քաղաքի նախաուրարտական շերտի ուսումնասիրությամբ հայտնաբերվում են զգալի քանակությամբ կուռքեր, որոնք այս շրջանին են պատկանում: Պեղումների ընթացքում բացվել են մեծ տարածություն գրավող բնակարաններ. նախորդ տարիներին բացվել էին սոսկ ուրարտական տիպային բնակարաններ. վերջիններիս պեղումներն այժմ որոշակի են դարձրել հասարակական տարբեր շերտերի առկայությունը քաղաքի բնակչության մեջ: Պեղված 400 քառ. մետր տարածությամբ բնակարանն ունեցել է օժանդակ շենքեր՝ մասան, ախոռ: 1957 թ. հայտնաբերված են այդպիսի 5 բնակարանների մնացորդներ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Թեյշեբախինն հանդիսացել է ոչ միայն ռազմաստրատեգիական մեծ նշանակություն ունեցող օբյեկտ, այլև իր էթնիկ և տարբեր ցեղերի պատկանող բնակչությամբ բարդ կառուցվածքով քաղաք: Ամրոցի պեղումների ժամանակ հայտնաբերվել են զգալի քանակությամբ երկաթե իրեր, որոնք տեղական են և ոչնչով չեն կապվում ուրարտական մետաղագործության հետ: Թեյշեբախինում կատարվել է տեղական և ուրարտական մշակույթի խաչաձևում: Ուսումնասիրությունները հիմք են տալիս ենթադրելու, որ ուրարտական քաղաքները բնակեցված են եղել տեղացիներով և ուրարտացիներով, բայց ոչ սոսկ ուրարտացիներով, ինչպես կարծում են մի շարք ուսումնասիրողներ:

1957 թ. 2. Մարտիրոսյանն ուսումնասիրել է Երևանի մոտ, Նոր Արեշում բացված ուրարտական դամբարանադաշտը: Ուրարտական առաջին դամբարանադաշտը բացվել է դեռևս 1914 թ. Իգդիրի մոտ՝ Սուրմալույում: Պարզված է, որ ուրարտացիները հանգուցյալներին դիակիզել են, մոխիրը լցրել աճյունասափորների մեջ և թաղել: Դրա կողքին մի այլ սափորի մեջ գրվել են հանգուցյալի իրերը: 1957 թ. բացված Նոր Արեշի դամբարանադաշտը խիստ ավերված է. գտնվել են զենքեր, զարդարանքներ և այլ իրեր: Առանձնապես սշրի են ընկնում ուրարտական երկու կնիքներ, որոնցից մեկն իրենից ներկայացնում է նույր, ռեայիստորեն կատարված ձիու գլուխ, տակին թոշուններ, մյուսը՝ կշռաքարի է նման և ունի ուրարտական թագավորի կամ

քրմապետի պատկեր: Ուրարտական պաշտամունքի ուսումնասիրության համար մեծ նշանակություն ունեն դամբարանադաշտում հայտնաբերված բրոնզե երկու թիթեղները, որոնց վրա վարպետ զրվագումով թագավորական որսի տեսարան է ներկայացված՝ վայրի ցուլեր, առյուծներ, հետիոտն զինվորներ և հեծյալներ, մեծ թափով սլացուլ մարտակառքեր՝ յուրաքանչյուրի վրա երկու մարտիկներ, որոնցից մեկը գինված է նեա ու աղեղով, իսկ մյուսը վարում է ձիակառքը: Մարտիկները նետահարում են զազազած առյուծներին: Պարզվում է, որ ուրարտական թագավորները որսի էին գնում ճիշտ այնպես, ինչպես ասորեստանյան թագավորները: Դրվագումով կատարված ուրարտական արվեստի այս սքանչելի նմուշը՝ լրոնգե թիթեղը լավագույն փաստաթուղթ է ոչ միայն պաշտամունքի, այլև ուրարտական թագավորների ու վերնախավի կենցաղի, տարազի, ընդհանրապես ուրարտական արվեստի ուսումնասիրության համար:

1957 թ. Հ. Մարտիրոսյանը պեղումներ է կատարել նաև Նոր Բայազետի շրջանի Նորադուզ գյուղի մոտ գտնվող դամբարանադաշտում, ուր հայտնաբերվել են բրոնզե իրեր ու առարկաներ, զարդեր և կավանոթներ, որոնք ժամանակագրվում են մ. թ. ա. VII—VI դդ., երբ Հայաստանում արտադրության մեջ լայնորեն գործադրվում էր երկաթը, իսկ որոշ տեղերում բրոնզի մշակույթը պահպանում էր իր դերն ու նշանակությունը:

Ճարտարապետության թեկնածու Կ. Հովհաննիսյանի ընդհանուր ղեկավարությամբ 1957 թ. Երևանի հարավ-արևմտյան մասում, էրեբունիում (Արինբերդ) շարունակվող պեղումներով բացվել է նոր պալատ երկու ռ. ՏԻՍ սեպագիր արձանագրություններով: Ինչպես պարզված է, արձանագրությունը խոսում է բերդի կառուցման մասին: Բացված պալատի կենտրոնական մասը բակ է ներկայացնում, որը զուրս է գալիս դեպի Սուսի անունը կրող տաճարը (բացվել է 1956 թ.): Բակը հետաքրքիր պերիստիլ է, որի մեջ պատերի տակ ծածկած սյունաշարք է. պահպանվել են սյուների բեկորները, խարիսխների հենատակերը: Բակի վրա երեք տարբեր կետերում հայտնաբերվել են որմնանկարների բեկորներ, որ վկայում է ամբողջ պատի վրա եղած Ֆրիզի գոյության մասին: Երեք տեղի որմնանկարներն էլ իրար նման են: Կ. Հովհաննիսյանի կարծիքով, բակը ոչ թե սոսկ տնտեսական նշանակություն է ունեցել, այլ սա ըստ երևույթին ծառայել է հանդիսավոր ծիսակատարությունների համար. ժամանակի ընթացքում խնդր նպատակների համար շենքը ձևափոխվել, վերաշինվել է: Պեղումների ժամանակ պալատի պատերի արտաքին մասում բացվել է մի շենք: Ուսումնասիրողները ենթադրում են, որ այս շենքը պատկանում է աքեմենյան շրջանին: Շենքի պատերն ունեցել են խորշեր, իսկ խորշերում եղել են մաստարաներ նստելու համար: Շենքն ուղադրվել է նրանով, որ ի տարբերություն Թեյշերախիյի և էրեբունիի մյուս շենքերի, պատը տեղտեղ ամբողջովին քարից է: Մուտքի ամբողջ լայնությամբ լավ վիճակում պահպանվել են 7 աստիճաններ: 1957 թ. պեղումների միջոցին հայտնաբերվել են բրոնզից պատրաստած մինիատյուր արձանիկ, խեցեղենի բազմաթիվ բեկորներ: 1956 թ. Արինբերդի պեղումների ժամանակ հայտնաբերված երկու արձանիկները պարզված է, որ ծագում են Միլեթից և վերաբերում են մ. թ. ա. 480 թ.:

էրեբունիի ճարտարապետական հուշարձանների նախնական ուսումնասիրությունը հետազոտողներին բերել է այն համոզման, որ էրեբունին բազ-

միցս վերակառուցվել է: ՀՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի ջոկատի հայտնաբերած միլիթյան դրամների պլուտով հաստատվում է էրեբունիի գոյությունը ընդհուպ մինչև մ. թ. ա. V դարը:

Գառնի ամրոցը վաղուց հայտնի էր իր հեթանոսական տաճարով և պարսպապատի մնացորդներով: Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի ձեռնարկած պեղումների շնորհիվ տարեցտարի նորանոր նյութեր են երևան բերվում, որոնք բնութագրում են հայ ժողովրդի հնագույն մշակույթը: 1957 թ. Գառնիի հնագիտական արշավախումբը պրոֆ. Բ. Ն. Առաքելյանի գլխավորությամբ շարունակել է ամրոցի պեղումները, որոնք սկսվել էին դեռևս 1949 թ.: Պեղումները կատարվել են երկու տեղամասում՝ ամրոցի պարսպապատի սրկարությունում, պատը դուրսից և ներսից ամրոցը երկայնքով, մինչև հիմքերը բացելու և ուսումնասիրելու նպատակով և 1953—1954 թթ. Գառնիի հեթանոսական տաճարից ոչ հեռու բացված մոզաիկ հատակով բաղնիքի (III դար) շրջակայքում պալատական կառույցների խաբի մեջ մտնող շենքի մնացորդները բաց անելու համար: Պարսպապատի հիմքերը բացելիս մի քանի տեղում շատ ցայտուն կերպով երևան եկան պատի սկզբնական շարվածքի և Տրդատ թագավորի կողմից կանգնեցված պատի տարբերությունները: Մի տեղում Տրդատի ժամանակ կառուցված պատի հիմքերը դրված էին նախնական շարվածքի վրա, որի երկու շարքի սրբատաշ քարերը մնում են հիմքի կրաշաղախ լիցքի տակ: Սի ալ տեղում պարսպապատը դրված է բրոնզեդարյան ամրոցի կիկլոպյան շարվածքի մնացորդի վրա. այդ է վկայում բրոնզեդարյան խեցեղենի, մասնավորապես կարմիր ֆոնի վրա սև նկարազարդ խեցեղենի բեկորների հայտնաբերումը առաջին դարերի շերտից ավելի խոր, պարսպապատի հիմքում:

Պարսպապատի երկայնությամբ կատարվող պեղումների ընթացքում երևան են եկել վաղ հայկական ժամանակաշրջանի խեցեղենի շատ օրինակներ, որոնցից մի մասը մինչև այժմ հայտնի չի եղել և երևան է գալիս առաջին անգամ: Շատ հետաքրքիր են վաղ միջնադարյան ժամանակաշրջանից հայտնաբերված խեցեղենի բազմաթիվ նոր նմուշները, որոնք կարևոր են Հայաստանի մինչև այժմ չուսումնասիրված այդ խեցեղենի առանձնահատկությունները և ժամանակագրությունը պարզելու տեսակետից: Պարսպապատի մուտքից արևելք, առաջին և երկրորդ աշտարակների միջև, պարսպապատի տակ V—VI դդ. պատկանող շերտում հայտնաբերվել են երկաթից պատրաստված եռոտանի մի աշտանակ իր թասով, ինչպես նաև երկաթե կանթեղ, որոնք այդ ժամանակաշրջանի առաջին գյուտերն են այդ դարերի տվյալ տիպի իրերի շարքում:

Ամրոցի պարսպապատից շատ ավելի ներս ընկած հեթանոսական տաճարի մերձակայքում տեղադրված է եղել ամրոցի պալատական կառուցվածքների խումբը, որի մեջ մտել է նաև հեթանոսական տաճարը և մոզաիկ հատակով բաղնիքը: Բաղնիքից ոչ հեռու, դեռևս 1955 թ. հայտնաբերվեցին մի այլ խոշոր շենքի արևելյան պատի մնացորդները: 1957 թ. պեղումներով երևան են եկել այդ շենքի մի քանի ներքին բաժանումները, որոնց հատակներն արված են կրաշաղաղ լիցքով: Ինչպես երևում է շենքը երկհարկանի է եղել և պահպանված մնացորդները պատկանում են ներքնահարկին. վերջինիս բաժանմունքներից մեկում տեղավորված է եղել խաղող ձգմելու հնձան: Այս տեսակետից խիստ ուշագրավ է Ազաթանգեղոսի վկայությունն այն մասին, թե Վաղարշապատում III—IV դդ. սահմանադրվում կային շենքեր նկուղային հարկաբաժնով, որը

պատմիչի մոտ հնձանահարկ է անվանված: Հայտնաբերված շենքի մնացորդները ցույց են տալիս, որ այստեղ եղել է բազմաբնի ժամանակակից աչքի ընկնող բազաբացիական շենք, շատ հետաքրքիր հատակագծով և շինարարական տեխնիկայով, որը, թերևս կարևոր նշանակություն ունենա հայ ճարտարապետության պատմության համար:

Ընթացիկ տարում Գառնիում պեղվել են առաջին դարերի մի քանի դամբարաններ, որոնց մի զգալի մասը սալարկղային թաղումներ են: Սալարկղային և մի քանի կարասային թաղումներում հայտնաբերված կավե և ապակե զենքերի անոթները, ոսկեզօծ ուլունքներն, ու գեղանկար սափորները լրացնում են Արշակունիների ժամանակի Հայաստանի կյանքի, կենցաղի և մշակույթի վերաբերյալ մեր գիտելիքները:

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պետական պատմական թանգարանի Դվինի Նադիտական արշավախումբը պրոֆ. Կ. Գ. Ղաֆադարյանի ղեկավարությամբ 1957 թ. շարունակել է հին Հայաստանի մայրաքաղաք Դվինի պեղումները: Քաղաքի կենտրոնական թաղամասի արևմտյան կողմում, Արտաշատի շրջանի Հողարևոզ դյուղի կոյտնտեսության անմշակ հողաթմբում բացվել են եռաշարք սյուների հետքեր, որոնք հանդիսանում են նախորդ տարում բացված VII—VIII դդ. ճարտարապետական հուշարձանի բազմաբնույթի մասերը: 1957 թ. բացվել է հուշարձանի հարավային և հարավ-արևմտյան մասը, մարքվել է ավազաքարից և աղյուսներից պատրաստված հարթ սալահատակը: Շենքի արտաքին եզրագծերը դեռևս լրիվ չեն պարզված: Բացվել են վարդագույն տուֆից 12 սյան քստանկյունաձև բազաները: Մինչև 1957 թ. պեղումները ենթադրվել է, որ շենքը երկշարք սյունաշար է ունեցել. այժմ պեղումները պարզել են, որ եռանակ սյունաշարով շենքը բազմաբնույթի հուշարձան է: Դվինի ավերակներին մոտ, Այգեստան դյուղի արևելյան գերեզմանատանը հայտնաբերվել են շենքի ներսի դիպսե հարդարանքի բուսական զարդերով զեղաքանդակ բեկորներ: Շենքի մինչև այժմ բացված մասի, վերջինիս սյուների, խոյակների վերակազմությունը կատարել է արշավախմբի ճարտարապետ Գ. Քոչոյանը: Քաղաքի միջնաբերդում շարունակվել են վերին շերտի պեղումները, որտեղ բացվել են միջնադարյան բնակարաններ, հայտնաբերվել են հասարակ և զրոշմազարդ խեցեղենի, մասնավորապես բուլսերի կենդանիների, թռչունների պատկերներով թոների կափարիչների բեկորներ: Հայտնաբերված իրերի մեջ խիստ ուշագրավ է ոսկե հյուսածո մանյակը: 1957 թ. պեղումներով Դվինում հայտնաբերվել են նաև զենքեր, բազմաթիվ այլ իրեր ու առարկաներ, որոնք թվարկվածների հետ բնութագրում են միջնադարյան Հայաստանի մշակույթն ու ժողովրդի կենցաղը:

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր ճարտարապետության գործերի և հուշարձանների պահպանության վարչությունը, ճարտարապետության թեկնածու Ա. Սահինյանի ղեկավարությամբ 1957 թ. հետազոտել է Հայաստանի վաղ միջնադարյան ամենանշանավոր հուշարձաններից մեկը՝ Արևրուչքը: Հետազոտության նպատակը հանդիսացել է բազմաբնույթի սկզբնական տեսքի նախագծի պարզելը: Ա. Սահինյանին հաջողվել է բացել բազմաբնույթի շրջապատը. բացվել են շենքի շուրջը պտտվող բոլոր աստիճանները, Հետազոտության պարզված է, որ արևմտյան՝ դիպսե շրջապատի սյունաշարն ունեցել է ոչ թե նրբ, այլ հինգ կամարներ: Պեղումների շնորհիվ բացվել են բազմաթիվ ճարտարապետական մանրամասներ՝ քիվի քանդակազարդ բեկորներ:

խոյակներ, պատկերաքանդակներ, բուսական և երկրաչափական զարդեր ունեցող գեղաքանդակ կոթողների բազմաթիվ բեկորներ: Հայտնաբերված խոյակներից մեկն իր վրա կրում է սիրամարգի պատկերը խաղողի ողկույզի հետ: Երեւոույքի արտաքին սյունաշարքի սյան քարերը, կամարի կրունկների քարերը հիմք են տվել Սահինյանին որոշելու կամարների կորուսվածներն ու վերականգնելու կամարաշարքի սկզբնական տեսքը: Բազիլիկ հուշարձանի շրջակայքը մաքրելու աշխատանքների միջոցին հայտնաբերվել են վաղ միջնադարյան մի քանի ամբողջական կղմինդրներ և բեկորներ: Սահինյանին հաջողվել է լիովին բացել բազիլիկ դահլիճի սկզբնական հատակը, որը հետաքրքիր է նրանով, որ ի տարբերություն մինչև այժմ հայտնի եռանավ բազիլիկ հուշարձանների, Երեւոույքի դահլիճի երեք նավերից կողքինները բարձր են եղել: Իսկ մեջտեղինը ավելի ցածր, որով վեհուստուն է հաղորդվել կողքի նավերի կամարաշարքերին:

Երեւոույքի պեղումների միջոցին Սահինյանի կողմից հայտնաբերվել են երկու գեմամաներ, ինչպես և կնիք հիշեցնող մի քանի իրեր: Սահինյանն ուսումնասիրել է Երեւոույքի տարբեր ժամանակներում կատարված կառուցումներն ու վերակառուցումները: Հայտնաբերած նյութերը կօգնեն պարզելու Երեւոույքի բազիլիկայի սկզբնական տեսքը, որոշակի պարզություն կմտցնեն աղբյուրի ճարտարապետության հնագույն հուշարձանների (IV—V դդ.) ուսումնասիրության մի շարք հարցերում:

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի և Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի ճարտարապետության գործերի և հուշարձանների պահպանության վարչության հանձնարարությամբ, ճարտարապետության պատմաբան, հայկական ճարտարապետության լավագույն գիտակ Ն. Մ. Տոկարսկին 1957 թ. պեղումներ է կատարել Կոտայքի շրջանի Զրվեժ գյուղի արևելյան մասում, այն վայրում, որը դեռևս 1942 թ. մասնակի շափով հետազոտվել էր ակադ. Հ. Օրբելու և Ն. Տոկարսկու կողմից: Զրվեժում կատարված պեղումներով Ն. Տոկարսկին բացել է խաչածե հատակագծով, ութանիստ գմբեթով եկեղեցի: Ծարտարապետական մանրամասների վրա եղած զարդաքանդակների բնույթից ելնելով Ն. Տոկարսկին այս հուշարձանը վերագրում է VI դ. վերջին և VII դ. սկզբին և հնարավոր է համարում դրա կառուցումը Հովհան կաթողիկոսի ժամանակ: Պեղումներով հայտնաբերվել են նշանակալի քանակությամբ ճարտարապետական մանրամասներ, կամարաղեղներ, քիվի բեկորներ և այլն: Հուշարձանը պարզարված է եղել խաղողի, խաղողի տերևի և այլ քանդակներով: Ծարտարապետական բեկորների վրա պահպանվել է արձանագրության մի մասը վարպետի անվան հիշատակությամբ: Զրվեժում պեղումները կշարունակվեն նաև 1958 թ.:

Չորրորդ տարին է, որ Հայկական ՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի վիճակագրության և հնագիտական գիտաբանության աշխատում է հայկական արձանագրությունները հավաքելու և ժողովածուի (կորպուս) ձևով հրատարակելու գործի վրա: Ինչպես հայտնի է, հին ժողովուրդների վիճակական արձանագրությունները սովյալ ժողովրդի պատմության և մշակույթի համար մեծ նշանակություն ունեն. այդ կարճատև հիշատակարանները առաջնակարգ սկզբնաղբյուրներ են ժողովուրդների պատմության և մշակույթի ուսումնասիրության համար: Բազմաթիվ հին ժողովուրդների արձանագրությունները, որոնք մասնակի կերպով էին հրատարակվել, XIX դարի վերջին ենթարկվեցին նոր համեմատու-

թյունների ու բանասիրական ֆննթությունների: Նրանց օգտագործումը դյուրին դարձնելու համար կազմվեցին մեծ ժողովածուներ, երևան եկան լատինական, հունական, արաբական և այլ լեզուներով արձանագրությունների կորպուսներ:

Հայկական արձանագրությունները անցյալում մասնակիորեն և անկատար ձևով հրատարակվել են զանազան ճամփորդական գրքերում և պարբերականներում: Հարյուրամյակից ավելի անցյալ ունի հայկական արձանագրությունների հավաքման և հրատարակման գործը. հանրահայտ են այդ բնագավառում մեծավաստակ Սրվանձտյանի, Ալիշանի, Ջալալյանի, Շահխաթունյանի, Մ. Բարխուդարյանի, Ե. Լալայանի և այլ հեղինակների անունները: Սակայն հավաքված և հրատարակված արձանագրական հսկայական նյութը ունեցել է պակասավոր կողմեր. բացակայում էր հավաքելու և վերծանելու հստակ մեթոդը, ցածր էր ժամանակի պատմա-գիտական մտքի մակարդակը: Դրանով պետք է բացատրել հրատարակված արձանագրություններում տեղ գտած խոշոր անճշտությունները, բովանդակության աղճատումներն ու թվականների, մանավանդ տեղանունների աղավաղումները: Ընդհանրապես հավաքողներն ընտրել են ծավալով մեծ, իրենց կարծիքով պատմական արժեքավոր նյութ պարունակող, հատկապես թագավորների, իշխանների և հոգևոր պետերի անուններ պարունակող և համեմատաբար լավ պահպանված և հեշտ վերծանելի արձանագրությունները միայն: Այդ պատճառով բազմաթիվ արձանագրություններ մնացել են չվերծանված և չհրատարակված: Հայկական էպիգրաֆիկայի առաջադիմությունը և նրա դիտական շրջանն սկսվում է բազմավաստակ կովկասագետ-հայագետ ակադ. Ն. Մառի գլխավորությամբ կատարված Անիի պեղումներով, երբ հնագիտական աշխատանքներին զուգընթաց Մառի և նրա աշակերտ Հովսեփ Օրբելու կողմից սկսվեցին Անիի և նրա շրջապատի արձանագրությունների հավաքումը բոլորովին նոր ժամանակակից սկզբունքներով և մեթոդներով: Օրբելին այդ տարիներին Անիի արձանագրություններից բացի հավաքում է Մարմաշենի, Շիրակավանի, Աղթամարի, Հոռոմոսի, Հաղարծինի, Գանձասարի և Աղվանքի մյուս կենտրոնների արձանագրությունները:

Հայկական արձանագրությունների ժողովածու կազմելու համար մեծ ջանք թափեց Ն. Մառը, սակայն նրա ձեռնարկումը հաջողությամբ չպսակվեց և նա ստիպված եղավ բավականանալ Կ. Կոստանյանցի «Վիմական տարեգրի» հրատարակությամբ, որը ոչ լրիվ մի ժողովածու էր:

Վիմական արձանագրությունների հավաքման և գիտականորեն հրատարակելու պայմաններ չկային անցյալում: Միայն Սովետական իշխանության օրով, երբ Հայաստանում գոյություն ունի Գիտությունների ակադեմիա, հնարավոր դարձավ այդ խնդրի իրականացումը: Չորս տարի առաջ, Հայկական ակադեմիան որոշում ընդունեց հավաքել հայկական բոլոր վիմական արձանագրությունները լուսանկարներով, գծագրություններով հանդերձ՝ տալով վերջիններիս գիտական վերծանությունը և դրանք հրատարակել կորպուսների ձևով: Հայկական ՍՍԻ ԳԱ Պատմության ինստիտուտը ձեռնամուխ է եղել հայկական վիմագիր արձանագրությունների հավաքման աշխատանքին, և միաժամանակ սկսել է ճրանց հրատարակությունն առանձին պրակներով այդ գործի գիտական հիմնադիր ակադ. Հ. Օրբելու ընդհանուր խմբագրությամբ: Արդեն հրատարակության են հանձնված Հ. Օրբելու «Անիի վիմագիր արձանագրությունները» (1-ին պրակ), Ս. Գ. Բարխուդարյանի «Վիմագիր հայոց» կորպուսի 2-րդ պրակը, որն

րնդրվում է պատմական Սյունիքի արձանագրությունները (պրակը պարունակում է 400 արձանագրություն, որից 305-ը նոր է հրատարակվում):

Հինգերորդ տարին է, որ գործում է Պատմության ինստիտուտի վիճակագրական և հնագիտական գիտարշավը, որի աշխատանքը գլխավորում է Հայաստանի պատմության և հնագիտության լավագույն գիտակ Ս. Գ. Բարխուդարյանը: Արշավախումբն իր աշխատանքներն սկսել է պատմական Սյունիքից և մինչև այժմ սպառիչ կերպով հավաքել է Գորիսի, Սիսիանի, Վափանի, Մեղրիի, Եղեգնաձորի, Վայոցձորի, Վեդիի շրջանների արձանագրությունները: Արշավախումբը 1957 թ. աշխատում էր պատմական Գեղարքունիքում՝ ներկա Նոր Բայազետի, Մարտունու և Բասարգեշարի շրջաններում: Չորս տարվա ընթացքում Պատմության ինստիտուտի էպիգրաֆիկ արշավախումբը հավաքել է ավելի քան 3000 արձանագրություն, սրանց 60 տոկոսը հրատարակված չեն բուրդովին: Հավաքված արձանագրությունները մեծ արժեք են ներկայացնում հայ ժողովրդի անցյալի՝ պատմության, լեզվի և մշակույթի բոլոր բնագավառների ուսումնասիրության համար: Դրանց մեջ կան կալվածագրեր, առուներ հանելու վերաբերյալ հիշատակագրեր, հուշարձանների կառուցման, պատմական անձնավորությունների գործունեության մանրամասները ճշտող արձանագրություններ, երևան են դալիս մշակույթի գործիչներ, ճարտարապետներ, քանդակագործներ, վերջիններիս աշխատանքները վարձատրելու ձևերն ու շահերը ցույց տվող արձանագրություններ և այլն:

1957 թ. Սևանա լճի ավազանում՝ պատմական Գեղարքունիքում հավաքված վիճակական արձանագրություններն ունեն հարուստ բովանդակություն: Գեղարքունիքում հավաքված արձանագրությունների հին խումբը վերաբերում է IX—XIII դարերին, որոնց աննշան մասն է միայն հրատարակված, այն էլ բազմաքանակ սխալներով: Այսպես, Երվանդ Այլայանի հավաքած մի արձանագրության մեջ հանդիպող Համազիզ անունը սխալ կերպով համաձայն է կարդացվել: Արշավախումբի հավաքած արձանագրությունների մեջ կան գյուղերի հիմնադրման, հուշարձանների շինարարության, ջրանցքների, կամուրջների կառուցման, ինչպես նաև քաղաքական ու բնական աղետների ճիշտ տարեթվերը որոշող արձանագրություններ: Երևան են գալիս միջնադարյան բազմաթիվ հայ ճարտարապետների և քարգործ վարպետների անուններ, որոնք կերտել են մեր միջնադարյան սքանչելի հուշարձանները (ճարտարապետ Սիրանես՝ Վայոց ձորի Նորավանք, Եղբայրիկ ճարտարապետ՝ Տեղերի հուշարձանները, Գալձակ ճարտարապետ՝ Գեղարդի վիճափորները), ինչպես նաև հիշատակարան-խաչքարերի քանդակագործներ, նկարող — կազմողներ, (Պավղոս, Մխիթար, Մելիքսեթ, Քիրամ և ուրիշներ), Քիրամն ունի ավելի քան 100 գեղաքանդակ կերտվածքներ: Միջնադարյան վարպետների անունների թիվը արդեն 200-ից անցնում է. այս ճարտարապետների, քանդակագործ վարպետների ստեղծագործությունների քննությանն է նվիրված Ս. Գ. Բարխուդարյանի «Միջնադարյան հայ ճարտարապետներն ու քարգործ վարպետները» մեծարժեք ուսումնասիրությունը, որն արդեն հանձնված է հրատարակության:

1957 թ. հավաքված վիճակական արձանագրություններում հանդիպում են քաղաքական ու բնական աղետների հիշատակություններ ունեցող արձանագրություններ, որոնք օգնում են պարզելու բնակատեղերի և ճարտարապետական հուշարձանների կործանման պատճառները: Այսպես, Մարտունու շրջանի Վարդենի գյուղում գտնվող օրորոցաձև երկու տապանաքարերի վրա հիշատակ-

ված է, որ 1322 թ. երկրաշարժի պատճառով մի ընտանիքից մահացել են 12 հոգի և միայն մայրն է կենդանի մնացել և շինել է տվել տապանաքարերը: 1957 թ. հավաքված արձանագրությունները, մասնավորապես Մարտունու շրջանի տապանաքարերի վրա եղած արձանագրությունները նոր նյութեր են տալիս Հայաստանում մելիթրությունների ավելի վաղ ծագման և այլ խնդիրների պարզաբանման վերաբերյալ: Արշավախմբի ղեկավար Ս. Գ. Բարխուդարյանը 1957 թ. վիճակաբան արձանագրությունների հավաքման հետ մեկտեղ Մարտունու շրջանի Լիճք և Աստղածոր-Վաղաշեն գյուղերում հայտնաբերել է երկու արտաշեսյան սահմանաքարեր արամեատառ արձանագրությամբ: Շատ մեծ է արտաշեսյան սահմանաքարերի նշանակությունը, վաղուց հայտնի է նրանց արժեքը, պարզաբանված է նրանց բովանդակությունը: Արամեատառ արձանագրություններ ունեցող արտաշեսյան սահմանաքարերի թիվն այժմ 5-ի է հասնում, ընդ որում բոլորն էլ հայտնաբերվել են Սևանի ավազանում. առաջինը հայտնաբերվել է Ե. Հայայանի կողմից 1906 թ. Նոր-Բայազետի շրջանի Կարմիր (Ղուլալի) գյուղում, Երկրորդը՝ 1932 թ. Մարտունու շրջանի Կզնուտ (Վերին Ղարանխուխ) գյուղում, Երրորդը՝ 1957 թ. հունիսին Մակքար գյուղում և երկուսը՝ 1957 թ. սեպտեմբերին Ս. Բարխուդարյանի կողմից: Արձանագրությունները բոլորն էլ գտնվել են իրարից ոչ հեռու 1—20 կիլոմետր տարածության վրա. արամեատառ արձանագրություն ունեցող սահմանաքարերը քառանկյունի, վերևում թափավորական թագ հիշեցնող երեք սրացող ատամներով, 40 սմ բարձրությամբ, 30 սմ լայնությամբ քարեր են, որոնք բոլորն էլ իրենց վրա ունեցել են հինգ տողից արձանագրություն Արտաշես Ա. թագավորի (189—160) անվան հիշատակությամբ: Այս սահմանաքարերի մասին հորենացին գրել է. «Յետ ամենայն առաքինութեանց և դործոց ուղղութեանց Արտաշիսի, հրամայէ գահմանս գիւղից և ազարակաց որոշել. քանզի բազմամարդացոյց յաշխարհս Հայոց, եկամուտս բազումս ածելով ազգս, և բնակեցուցանելով ի լերինս և ի հովիտս և ի դաշտս: Եւ նշանս սահմանացն հաստատեաց այսպես. հրաման տայով քարինս կոփել շորեփկուսիս, և պնակաձև փոսել զմէջսն, ծածկելով յերկրի և շորեփկուսիս ի վերայ յարուցանել ամբարտակս, սակավ ինչ բարձրագոյն յերկրէ»: Մարտունու շրջանում այս տարի հայտնաբերված երկու սահմանաքարերի մյուս երեսին հետազայում խաչ է քանդակվել, որը նույնպես կարևոր նշանակություն ունի խաչքարերի ծագման, նշանակության խնդիրների լուսաբանման համար: Այդ հին սահմանաքարերը ժամանակին ժողովրդի մեջ իրենց նշանակությամբ էլ ըմբռնվել են. միայն նոր, քրիստոնեական զաղափարախոսությունը նրա վրա գրել է իր կնիքը՝ օգտագործելով որպես խաչ: Արամեատառ արձանագրությունների տարեցտարի ավելացող գյուղերը կարևոր նշանակություն են ստանում այդ ժամանակաշրջանի Հայաստանի հասարակարգի բնույթի որոշման տեսակետից. Ս. Գ. Բարխուդարյանը գտնում է, որ իրար այդքան մոտ գյուղերում հայտնաբերված արձանագրությունները ըստ երևույթին ֆեոդալական տիրույթների սահմաններն են մատնացույց անում:

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի վիճակագրական և հնագիտական գիտարշավը 1957 թ. Բասարգեշարի շրջանի Ակունք գյուղի մոտ հայտնաբերել է մի հուշարձան, որին տեղացիները «Վյորդար» անունով են կոչում: Գյուղացիները կավահողն օգտագործելու նպատակով, բացել են անխորժ աղյուսից շարված արևելյան պատը, ուր պարզ երևում են 15 մետր տարածության վրա, իրար մոտ տեղադրված երեք դռներ:

աղյուսներն իրենց չափերով և ձևով հիշեցնում են ուրարտական Բեյշեբախի ի անթործ աղյուսները: Նախնական դիտողությունները ցույց են տալիս, որ այն հավանաբար ուրարտական մշակույթին անմիջապես հաջորդող վաղ հայկական ժամանակաշրջանի հուշարձան է: Որոշված է 1958 թ. «Կլոր դարում» կատարել ստուգողական պեղումներ, որոնք կսկսվեն հուշարձանի ժամանակը, տիպը և լուվանդակությունը: Վիճագրության և հնագիտության գիտարշավը Մարսունու շրջանի Ձորագյուղ և Աղամիսան գյուղերի ամառանոցներում հայտնաբերել է մի քանի զեղաքանդակ գրանիտակերտ խաչքարեր, որոնք ունեն անհայտ նշաններով արձանագրություններ և գիտական մեծ հետաքրքրություն են ներկայացնում: Ս. Գ. Բարխուդարյանը այժմ զբաղված է այդ արձանագրությունների վերծանմամբ: Գիտարշավն այս տարի առաջին անգամ մանրազնին քննության առարկա դարձրեց նաև Սևանի ավազանում՝ Նոր Բայուղետի, Մորտունու, Բասարգեշարի շրջանների գյուղերում շատ տարածված տապանաքարերը, որոնց վրա լացի կարևոր արձանագրություններից կան նաև լազմազան լուվանդակութամբ քանդակներ: Տապանաքարերի վրա պատկերված են աշխատանքի գործիքներ, աշխատանքային պրոցեսներ, մարդու և կենդանիների պատկերներ, աշխատանքային, հարսանեկան և մահացյալի տարազ, կենյալային՝ հարսանիքի և թաղման տեսարաններ, կենցաղի հետ կապված իրեր ու առարկաներ, արհեստավորական գործիքներ, երաժշտական գործիքներ, որսի տեսարաններ, որսորդական զենքեր և այլ քանդակներ, որոնք շատ հետաքրքիր են ազգագրական և պատմա-արվեստագիտական արժեք ներկայացնող նյութերով և կարևոր աղբյուր են հանդիսանում հայ ժողովրդի XV—XVI դդ. կենցաղը, նրա մշակույթն ուսումնասիրելու համար:

Գ. ԿԱՐԱՆԿՆՅԱՆ